




THE
DICKRIS PUBLISHING CO.
NEW YORK CITY.



ՏԵԳՐԻՍԻ ՍԻՆԱԿԱՆԵՐԻ ԲԱՑ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՆԻ:

ԱՂԳԱՑԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒՆ 59 ՆՈՒ ԵՈՐԲ, ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 24 1898 ԳԻՆ 3 ՍԷՆՆ

ՐԱՑՖԻՆՆ ՄԱՀԱՐՁՈՆ

Թիֆլիզ, 23 Հոկտ. 98
Օրը գեղեցիկ էր:
Ցուրս եղանակին տաքացնող արեգակի ճառագայթները այսօր մի առանձին գեղեցկություն էին ստացել: Կարծես նրանք վերջինը պիտի լինէին այն ջերմ օրերից, որոնք վաղահաս աշնանամուտին դիմադրելու գեռ ու ծեղ էին. բայց այդպէս չէր. այսօր նրանք հաւաքել էին իրենց վերջին ոյժը, ոչ թէ կոխ տալու, այլ լուսաւորելու մի հանգիստեւոր առաւօտ, որին անհամբեր սպասում էր և ամբողջ ամբողջ օրի սրտին մօտ էր Բաքիի անունը և որի յիշողութեան մէջ ղեկ թարմ էր աստ ասորի առաջ հոգին յանձնած այն անմահ վիպագրի մարմինը, որի գաղափարներով խմբուած էր իր միտքը:

Բազմաբնի դուրս, խոշորանքի գերեզմանատանը հաւաքուած հոծ բազմութիւնը բռնուած էր այդ ահագին տարածութեան համարեայ կէտը. այստեղ աչքի էր զարկուած մեր, այսպէս կոչուած, ինտելիգենան, որը չբնագրաւոր ստան մարմարէ արձաններ, տաք տաք խօսում էր այդ ծանր քարի տակ հանգչող մեծ մարդու մասին. իսկ աւելի հեռու, գերեզմանատան մտուռներ շուրջը, խմբուած էր գործաւոր դասակարգը. այստեղ նա լուռ էր: Մատուռին մէջ մատուցանում էին ս. պատարագը. հեռուից, հայ գործիչների շրջապատին միջից, մահարձանը լուռ նայում էր դոցա. կարծես դա Բաքիին լինէր, որը համբուժեամբ, իր յոգնած աչքերը ազուցած կապոյտ ակնոցներով միջից, գիտում էր այն բերրի սրտերը, որոնք այդ բազմութեան մտուռի այլուրտի հետ վեր համբարձում էին իրենց մաղթանքը:

Կէսօր էր: Պատարագը աւարտելու վրայ էր. ամբողջ գումարուած էր արձանի շուրջը:
Այժմ, կարծես բոլորին պաշարել էր անխօսութեան լէտարգիւն, բոլորը կարծես խօսում էին իրենց սրտին հետ միայն: Ամբողջ յանկարծ երեսրայ, մահարձանի ամուր շրջապատը ճեղքւեց, նորա միջից դուրս եկաւ մի այնպիսի գլուխ, լայն ճակատով: Դա Հայ նշանաւոր թատերագու, «Պէպոյթի», «Էլի մէկ գոհ»ի, «Խաղաբալայ»ի և շատ այլոց ակնաւոր ստեղծագործողն էր (1):

Բոլորի աչքերը նորա վերայ յառուեցան: Նա, ժամանակիս այդ ակաւնաւոր հայ մարդը, երեք անգամ ծընրադրեց արձանի առջև, խաչակնքեց, ցածիկ ալօթեց և ապա նոր մի հայեացք ձգեց մահարձանի վերայ. կարգաց խոշոր տառերով փորագրուած ՐԱՑՖԻՆՆ ԲԱՑ, կարգաց անմահի մի տուն ոտանաւորը՝ որ փորագրուած էր այդ անունի տակ.
«Քար է քո սիրտը և խիղճը մեռած. «Քանի՛ արիւններ, քանի՛ կոտորած «Տեսար, լուցիլի և դարձեալ պայծառ, «Հայ երկրի վերայ կապում ես կամար» («Ձայն տուր, ո՛վ ծովակից»):

(1) Մեծապատիւ Պարոն Գարբրէլ Սունդուկեանց:

Արեգը հաւաքեց իր ճառագայթները. նա էլ տրեց. սև և խոշոր ամպեր ծածկեցին երկինքը: Մէկ ժամն էր: Թափորը դէպի վիպագրուղի շարժուած: Հասնելով գերեզմանին, քահանայական խումբը իր գլուխ ունենալով թեմին Սըրբազան առաջնորդ Սուրէնեան արքեպիսկոպոսը՝ սկսեց ծիսակատարութիւնը: Այդ միջոցին, մի ընտանիք (չեմ սխալի ասելով որ Բազուկցի էր) թարմ մի պսակ դրեց արձանի առաջ: Ուրիշ պսակ կամ ծաղիկ չկար...
Հանգիստը կատարուելուց յետոյ, լցուած սրտերը միացան քառաձայն (1) «Հայր մեր»ի հետ: Սրբազան առաջնորդի «Ձի քո է...» կնքեց կարգը և քահանայը ցրուեցան:

Բայց ամբողջ չէր կամենում հաշտուել այն մտքի հետ, որ կարելի է հեռանալ այդ պաշտած մարդու ստան արձանից, առանց քամելու և հովացնելու իրենց սիրտը: Նա դուռնաբաց սպասում էր, որ մին գոնէ մի երկու խօսքով շօշշ իրեն պապակը. ի դո՛ւրս:
Ամբողջ ներքին ձայնին արձագանք հանդիսացաւ մին միայն, որ յուզուած, բայց հանդարտ ձայնով մօտաւորապէս այս ստաց. «Այսքան մարդկանց մէջ չը գտնուեց մէկը, որ այս համեստ արձանի առաջ արտասանէր մի երկու խօսք»: Այդ ամբողջի ձայնն էր:

Ահա տանտ տարի սպասուող մահարձանը և նորա համբաւը: Ահա «Բաքիին» — և նորա սիրած ամբողջը...
Տխուր և անխօս ամբողջ ցրուեց: Նոցա հեռացրեց երկինքը, որ տասը տարի ոտով այնքան սաստիկ ողբաց իր գաւակի դազագի վրայ:

Դուք, ասում էր նա, լուռ ողբալ միայն գիտէք. դուք չը զարդարեցիք այդ մեծ մարդու պապ անգրին ծաղիկներով, ես իմ արցունքներով կը լուամ այդ մարմարը. թո՛ղ այդ արցունքները ոտագն հողը, թո՛ղ առաջինայ դարունքին գայ եւ բերէ նորարողող ծիլեր. մանկտին, գարնան մանկտին, նա անշուշտ կը հիւսէ այդ ծիլերը և կը պսակէ անմահի վաստակաւոր գլուխը, նրան մշտնջենական հանգիստ տալով...»
Եւ յորդ անձրեւը տեղալ սկսեց. (Արմէնիա) Ս. ԽՕՍԻԿԵԱՆՑ

ԱՂԳ
Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ պաշտամունքը կանոնաւոր կերպով կառավարելու համար դպրաց դաս մը կազմելու ձեռնարկած լինելով՝ ձայնաւոր երիտասարդներու պէտք ունինք: Ուսուի Ս. Եկեղեցւոյ երգեցողութեանց քիչ շատ վարձու թիւն ունեցող մեր եղբայրներէ կը խնդրենք յատկապէս որ հաճին գալ միանալ մեզի, որպէս զի կարենանք միայուն և կանոնաւոր դպրաց դաս մը ունենալ: Ի Դիմաց Դպրաց Դասու Դպրագետ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆԵԱՆ
(1) Պրն. Պակար Էկմարեանի ձայնագրած:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Սպանիո Ամերիկեան դաշնագրու թիւնն կնքուեցաւ ի Փարիզ անցեալ Շաբաթ օր: Սպանիոյ ներկայացուցիչներէ մէկին՝ Սենեօր Բիօսի ըսածին նայելով, Սպանիա ամեն բան կը կորսուեցնէ իր պատուէն դաս: Սակայն ցաւալի է որ այս դարուս մէջ Եւրոպական ազգաց համար պատիւը փոք չի կշտացներ: Շատ աւելի աղէկ պիտի ըլլար խեղճ Տօնեուս համար, եթէ այդ պատիւը կորսնցունէին ու անոր փոխարէն Քիւպան, Փորթօ Րիքօն, Ֆիլիպին և Գատորն կղզիները պահէին:

— Զօրավար Մէրիթ, Ֆիլիպիններու ամերիկեան բանակին հրամանատարը քաղաքս եկաւ անցեալ կիրակի օր: Ասոր կնքածօք Միացեալ Նահանգներն պարտին իւրացնել այդ կղզիները, և ո՛չ թէ անկախութիւն տալ անոնց: Կը թուի թէ Ամերիկայի համար այնչափ յարմար է այդ կղզիները պահել, որչափ յարմար է յարմար է այս ՅԱ տարեկան զօրավարին համար Զիքակոյի 24 ամեայ օրիորդ Ուրիլըմի հետ ամուսնանալ. և եթէ այս թո՛ւմած գինուրը կըրնայ նորաթիթ օրիորդ մը երջանիկ ընել, ինչո՞ւ Ընքը Սամ չի պիտի կրնայ երջանիկացնել Մալէզ Գիցուհին:

— Ռուսիոյ կողմէն կրանա Տիւք Նիքօլա Պոլիս գնացած է Սուլթանին հետ անոնուելու համար. այս այցելութիւնն պիտի ծառայէ եղեր երկու երկիրներուն մէջ տեղ տիրող այժմեան ցրտութիւնն թուծելու և Գերմանիոյ կայսեր ճամբորդութեան թողուցած ազդեցութիւնն չեզոքացնելու:

— Անցեալ շաբթու Սուլթանը բարեհաճած է բարձր ունկնդրութիւն մը շնորհել Միացեալ Նահանգաց զեւպան Մ. Ըսթրալսի, և ըսած է անոր թէ Ամերիկացի քաղաքացիներու կըրած վնասներու խնդրը պիտի կարգադրուի քիչ ատենէն:

— Բազաքահան շրջանակներու մէջ կը խօսուի ամեն տեղ թէ Ամերիկա, Անգլիա և Ճաբոն երեակ նիզակակցութիւն մը պիտի կազմեն: Մայրաքոյն Արեւելից մէջ Ռուսիոյ ազդեցութիւնն ջլատելու նպատակաւ:

— Գաղիոյ մէջ քաղաքագէտը կը մտածեն թէ՛ արդեօք կարելի չէ՞ Ալզաս Լօրէնի խնդիրն կերպով կարգադրել ու միանալ Գերմանիոյ հետ: Անգլիոյ դէմ ճակաւ կրնալ պարպազելու համար: Դիւրին է խորհիլ, բայց երբեմն անկարելի՝ գործադրել...:

— Զօրավար կարսիան, այն անվեհեր մարդը, որ կէս դարէ աւելի կուեցաւ իւր հայրենիքի ազատութեան համար՝ սպանիական թրքանքման բռնակալութիւններու դէմ, անցեալ շաբթու, Ուաշինկթընի շքեղ մէկ պանդոկին մէջ հոգին աւանդեց:

Հայրենասէրներու և հերոսներու մէջէն շատ քիչերը այս դիւցազնին շափ երջանիկ մեռան, որովհետեւ շատ

քիչերը իրենց աչքերով տեսան ազատութիւնը և երջանկութիւնը այն ժողովուրդին, որուն համար կոուեցան ու տառապեցան: Քիւպացի հերոսը գոհունակութիւնով փակեց իւր աչքերը, որովհետեւ տեսաւ իւր հայրենիքի վերածնութիւնը:

Ամբողջ Քիւպան ու մանաւանդ անոր երիտասարդութիւնը սուգի մէջ է. անթիւ ծաղիկապսակներով շրջապատած են իրենց ազատարար ճարմիկը: Քիւպացին իւր հերոսները ճանշնալու շափ մեծ է:

— «Արեւել» ի մէջ կը կարգանք. վանայ կուսակալութիւնը սա հեռադիրը ուղղած է կայս. Պալատան Ա. քարտուղարին.

«Զեր վսեմութեան 11 Նոյ. 1314 թուական հեռագիրը, թելեբուս աւրուած ըլլալուն հետեանքով՝ հիմա ստացուեցաւ: Գոհութիւն մատուցոյ, ո՛չ վանայ և ո՛չ ալ նահանգին մէջ այդպիսի անկարգութիւն մը և անոր հետեանքով մարդու կորուստ ընալ չէ պատահած և լուրջ բոլորովին անհիմն է: Ծնորհիւ վեհ. Սուլթանին, հիմակուան հանդարտութիւնը վերջին տարիներու մէջ նմանը չ'տեսնուած եղանակաւ գոհացուցիչ է՝ 13 Նոյ. 314 կուսակալ վանայ թԱՀԻՐ

Այս հեռագիրը ինքնին ապացոյց մը չէ՞ արդէն թէ «վանայ նահանգին մէջ, վեհ. Սուլթանի շնորհիւ, անկարգութիւն կը տիրէ և անոր հետեանքով մարդու կորուստ» պատահած է թերեւս ասանեակներով: Տաճկաստանէ դուրս, ուրիշ երկիրներու մէջ այսօրինակ ծիծաղելի բաներ չեն պատահիր երբէք: Ինչո՞ւ օր մը Անգլիական թերթ մը չի հրատարակիր թէ այս ինչ կամ այն ինչ գաւառին մէջ վեհ. Թագուհի շնորհիւ կատարեալ անգործութիւն կը տիրէ... Գող՝ սիրաք դող...:

ԱՂԱՏ ԼՍՍԱՐՆ
Զիմընի Գօրնըր Հօլ,
Թիւ 57 Ուէսթ 25րդ փողոց:
Այս կիրակի Երեկոյ, ժամը ճիշդ Ցին Պիտի խօսին. Տքթ. Յ. Արշակունի և Տիար Պ. Գասպարեան: Առաջնոյն նիւթն է «Գաղտնի հիւանդութիւնը արանց», երկրորդին՝ «Սուխալիզմը»: Ըսք սովորականին պիտի երգուին ազգային երգեր:
Ամեն շափահաս այր-մարդ հըրաւիրեալ է ներկայ գտնուիլ:

ԱՂԳ
Նիւ Եորքի Հայ Երիտասարդաց Որբայնամ Ընկերութիւնը իր գոյութիւնը ունեցած է ներկայ տարուոյս Նոյեմբեր 1 էն սկսեալ և կուգայ ներկայիս հրատարակել իր գոյութիւնը, որպէս զի ամեն Հայ ազգայինք իրենց առ որբերը ունեցած պարտուց կատարման միջոց մը ունենան: Այս առթիւ Ընկերութիւնն ուրախութեամբ պիտի ընդունի այն ամեն անձանց անուններ, որոնք դեռ ինքզինքնին արձանագրել տուած չեն՝ Ընկերութեանս իր անդամ:
Թղթակցութիւնը և դրամ պէտք է ուղղել Գանձապետին:
Մ. ՈՍԿԵՐԻՉԵԱՆ
318 Իսթ, 34րդ փողոց. Նիւ Եորք:
Ի Դիմաց Հայ Երիտ. Որբու. Ընկ.



ՇԱՐԲԱՍԹԵՐԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուիմէն Շարաթ օրեր,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ - - - - Խմբագիր

ԲԱՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	ՏՂ. ՍԹ. 1 50	Տարեկան	10 Ֆրանք.
Վեցամսեայ	75	Բաժանորդագիրն ԿԱՆՈՒԿ	
Եռամսեայ	40	վճարելի է միշտ	

Ծրար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝

To the DICKRIS PUBLISHING CO., 145 East 23d St., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆՈՒ ԵՐԿԻՐ, ՇԱՐԲԱՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 24 1898.

Չ Ե Թ Ո Ւ Ն Ի Զ Ա Ն Դ Է Ս Ը

Բացի ծանօթ նպատակէն, անցեալ Շարաթ երեկոյեան հանդիսին մէջ չի կար և չէր կրնար թերևս գտնուիլ բան մը որ Օր. Պօզէնի երկու հայերէն երգերուն պէս խոր պատգամներ ձգէր հանդիսականաց վրայ: Տեսայ շատ աչքեր, որք յուզումէն արատուօք լեցուած էին՝ հոշակաւոր երգչուհւոյն երգած ժամանակ: Անոր քաղցր ձայնը արտուր եղանակին և արատանութեան մէջ՝ ամերիկուհւոյ մը յատուկ բնի բնի շեշտերուն միացած, հզօր կերպիւր Հայ մարդու հոգեւոյն և սրտին կը խօսէր՝ մեր ազգային ծանօթ երգին խօսքերով թէ «Հայերն իր քեզ կը կանչէ. հեռու ես Հայաստանէն»...:

Հանգէսը ամեն կերպով յաջողութիւն մ'էր: 500ի շափ երկսեռ բազմութիւն մը փութացած էր, անսուղ Ձէյթունցիներն պատմուր մը հաց ստուր համար, իր ներկայութեամբ պատուելու և քաջալերելու զայն:

Տ. Բէլէկեան՝ Յաննախմբի Սաննապետը՝ համառօտ բայց խնամով պատրաստուած նախաբանով մը բացաւ հանգէսը ու մատնանիչ ըրաւ ժողովրդին՝ այն թափուր օթեաններն, յորս կ'ակնկալուէր Հայ Արևիսթաբաթները բազմամտ գտնել այդ առթիւ: Բայց ցաւալի է ըսել թէ այդ երեկոյ ժողովարարն 20 օթեաններէն 9 միայն բռնուած էին, իսկ մնացեալներու տէրերն իրենց ամուսնուր ևս զըրկած էին՝ առարկելով թէ Ձէյթունցիներն հաց ստուր մէջ կրնար քաղաքական նպատակ մ'ըլլալ: Ի՞նչ անգուժ առարկութիւն:

Յայտագրին մէջ մտաւ ունեցողներն յաջողութեամբ կատարեցին զայն: Օր. Պօզէնի ճարտար մտանքը դաշտակին այնպիսի լեզու մը կրցին ապ, որով նուազարանը յաջողեցաւ խօսիլ եւրոպական եղանակներու անընտել անձանց սրտերուն անգամ: Օր. Պօզէ երեկոյեան զրեցազնուհին էր. ծափերու որոտումներէն ու ծաղկափունջերու հեղեղէն զատ հայ ժողովուրդը ուրիշ բան մը չուներ՝ իր շնորհակալութիւնն ու համակրանքը անով յայտնուող համար քաղցրածայն երգչուհւոյն:

Տիար Թալաշանեան իր ասեանախօսութեան մէջ րացատրեց թէ ինչո՞ւ պարտաւոր էինք օգնել Ձէյթունցի կարօտեաններուն, և հերքեց հրապարակաւ այն անտեղի կարծիքը՝ թէ քաղաքական նպատակ մը կար պահուած այս իլուր աշխարհի բացումը հանգանակութեան մէջ:

Պ. Ասեանախօսը կատարեց նաև անդապետի պաշտօնը մեծ յաջողութեամբ: Ժողովրդէն ստացուած իր 100 կըստուր նուէրներն՝ երկու ժամ մէջ՝ 250 սուրբի ծախուեցան: Եւ տարակոյս չի կար թէ այդ գումարը պիտի կրնար կրկնապատկուիլ դերութեամբ, եթէ մեր անտարբեր հարուստներն վերջի պահուն ծանօթ հարուստը իրիզ ընէին չի ապ այս բարեգործական ձեռնարկին:

Ժողովոյ փակումէն վերջ, ժողովուրդը մինչև առաւօտեան ժամը երկուքը սրահի վարի յարկը անցուց՝ ճաշի և տեսակցութեան համար:

Հանդիսին ամբողջ եկամուտը յայտնի եղած չէ տակաւին, բայց Յաննախմբի անդամք կը կարծեն թէ ըրար ծախքերը գոցելէ վերջ՝ դեռ 400 սուրբի գումար հոգ մը պիտի մնայ՝ գանձապետին քով գտնուած զբամբը կրկնապատկելու համար: Բայց նիւ Եորթը դեռ լինուցած չէ իր գործ. Յաննախմբուր դեռ հանգանակութեան պիտի սկսի, և Յունվարի մէջ փառաւոր ներկայացում մ'ալ պիտի ստայ այս նպատակի համար: Եւ տարակոյս չուենք թէ Տիգրիսի գուհակութիւնն ոչ միայն պիտի կատարուի, այլ նիւ Եորթը 1000 սուրբէն աւելի մեծ գումար մը պի-

տի տուած ըլլայ Ձէյթունցի կարօտեաց համար: Եւ եթէ մեր հարուստներէ քանինք փախուստ տուին՝ ձեռնարկին քաղաքական երեկոյ մը ապա սնտոի առարկութիւններ ընելով, կը հաւանք սակայն որ հայ հասարակ ժողովուրդը, ինչպէս նաև հարուստ դասակարգին լուրջ ու սրտոտ մասը, անոնց պակասը կը լեցնեն ու Ձէյթունցի անօթին շենքերը իր արդար իրաւունքէն:

Ամեն պատիւ հայ ժողովրդին, որ փութաց այս հանգէսին մէջ՝ հակառակ ամեն սնտոի սարածայնութեանց՝ կատարել իր պարտականութիւնն ու պահել Յաննախմբի յոյսերն ու ակնկալութիւնները: Եւ կը մաղթենք որ ուրիշ քոյր գաղթականութիւններն այսուհետև նիւ Եորթի Հայոց օրինակին հետեւին ու բազմապատկեն իրենց ջանքեր՝ տալով այնչափ, որչափ կը ներէ իրենց կարողութիւն:

Եւ Ամերիկայի Հայ գաղթականութիւնն պարտի առնուածն 5,000 սուրբ տալ այս նպատակին համար:

ԱՆՍԻՐԻՆ ԿՈՏՈՐԱՐԸ

Բ.

Էջմիածնի վանքին մութ խցիկի մը մէջն էր որ նշանաւոր Սրբազան մը, խորունկ վշտով պատմեց ինձ թէ Աղզի մէկ շատ նեղ ու ճգնաժամի օրերուն մէջ, շատ տարիներ առաջ, ծերունի կաթողիկոս մը կ'ընէ Ձարին կ'երթայ. կայսերական ներկայութեան երևուած պէս՝ կաթողիկոսի — որուն անունը հիմայ չեմ յիշեր լաւ — առաջին խօսքը կ'ըլլայ Ձարէն խնդրել, որ իր (կաթողիկոսի) մէկ մօտ ազգականին ամսական մը և պաշտօն մը յատկացուի, որովհետև նեղ օրերու մէջ է եղեր այն: Սըրբազանը ըսաւ, Ձարը բարեգութեամբ դուրս կը վաճառէ կաթողիկոսը ու վերջէն կ'ընէ իր նախարարներուն թէ «այդ կաթողիկոսն ա'լ գծուծ ու ստորին մարդ չըլլար, քանի որ փոխանակ իւր ազգի այս վտանգաւոր կացութեան մէջ գալու ինձմէ դարման մը ու օգնութիւն մը ինչդրու, ելեր եկեր ինձմէ իւր ազգականին համար դրամ ու պատիւ կը մուրայ»:

Սրբազանը պատմեց այս պատմութիւնը այն օրերուն: Երբ Հայոց Հայրիկը մէկ օր առաջ վերադարձեր էր Նիքոսի Ձարին հետ ըրած տեսակցութիւնէն: Ամեն մարդ կը յիշէ այդ օրերը. Ստուենի կոտորածէն վերջն էր, աշխարհիս Հայութեան աչքերը յառած էին Հայրիկի վրայ, որն Ս. Բեդրապուրի պալատին բուրբալքը կը դեգերէր ու կը դեգերէր՝ Ձարին հետ տեսնուելու համար. նոյն իսկ ոչ-Հայրիկեաններն ալ սկսան բռն մը ակնկալել այդ տեսակցութեանէն. գէթ կ'ուր ու ազգու աղբրագիր մը կըսէին պիտի ներկայացնէր Հայրիկ Նիքոսիին:

Սրբազանի պատմութիւնը ինձ պատմելէն երկու օր վերջն էր որ շատ ստույգ և իրազեկ անդէ մըն ալ լսեցի թէ Հայրիկը այդ տեսակցութեան մէջ՝ առաջին պատահութեամբ խնդրած է Ձարէն Սեդրակեան եպիսկոպոսի էջմիածնայ վանքէն հեռացուելը:

Երբ կարգացի վերջերս Ձարի կրկին պահանջը Հայ դպրոցներուն, այս երկու պատմութիւններն ալ արժողջութեամբ մ'իտքս ընկաւ:

Մէկ կաթողիկոսը, ազգի ամենէն նեղ օրերուն, իւր նեղ կացութեան մէջ եղող ազգականը յիշած էր. ու այն ասեանայ Ձարն ալ, թերևս թուգեական արգարախոհութեան տակ, վեհանախարար շէր ուզած ազգականասէր և ո'չ ազգասէր կաթողիկոսի արատազրուութեան օգտուիլ:

Ժամանակը անցաւ, ու օր մը երբ ուրիշ կաթողիկոս մը, 6000 դոնկերու խօսքէն առաջ, Ձարին Սեդրակեանի խօսքը կ'ընէ. այս Ձարն ալ մ'իտքս շափ վեհանախ չ'ըլլար ու կ'օգտուի առիթէն, և կը պահանջէ Հայրիկէն դըպրոցները, ու Հայրիկն ալ կը յանձնէ գանձեց առանց մէկ անգամ իսկ ըսելու Ձարի երեխին թէ՛ և չեմ կրնար տալ գանձեց, քանի որ ազգի կամքը չուզեր որ 20 տարի վերջը ամբողջ Ռուսաստանի Հայերը ռուսերէն խօսին:

Ի՞նչ կ'արժէ ազգին կամքը Ձարի կամքին քով, պիտի ըսեն Հայրիկեանները, անանկ չ'է. Ի՞նչ կ'արժէր ուրեմն այն ազգի կամքը, որ նոյն իսկ սուլթանական բռնութիւններուն տակ՝ յայտնեց ինքզինքը՝ Հայրիկը կաթողիկոս ընտրելով ու զրկելով էջմիածին:

Այն պահուն, երբ Հայաստանի մէջ հայը հոգեվարքի ու ջարդի մէջ էր, Իզմիրեան Սրբազանը նորէն զգաց որ այդ արիւնի մէջ թափուած Աղզը կամք ունի, ու Սուլթանի երեսին ըսաւ. «Աղզի կամքն է որ բանտարկեալներն անմիջապէս ազատ արձակուին», ու ազգի կամքը եղաւ:

Եղածը եղաւ, միայն եղածի ահուկութիւնը ճանչնանք ու անոր պատասխանատուները: Ալ Հայ լեզուն հայուն համար միշտ շարաթը երեք օր պիտի դասաւանդուի: Ռուսերէն է Ռուսահայերու լեզուն սակից վերջը:

Գտան տարի վերջ ամեն Ռուսահայ Ռուսերէն պիտի խօսի:

Յիսուս տարի վերջ Ռուս եկեղեցին պիտի երթայ անիկայ:

Հարիւր տարի վերջ Մոսքով մ'ըն է այն:

Տաճկահայաստան Հայու լեզունները կարծեցին. Ռուսահայաստան Հայու լեզունները փոխեցին: Թ. Չ.



ՁԵՑՈՒՆԻ ՍԻՆԱՆԸ

Լինէն Դեկտ. 12 թիւ նամակ մը ստացած ենք պատահական թղթակցեց մը, որ կ'իմացնէ թէ անդույն ժողովուրդը՝ ժամանակին որչա՞մ է եղեր քուէից մեծամտնութեամբ՝ Ձէյթունցի համար հանգանակուած դրամներն ընդհանուր Գանձապետին զրկել. սակայն կը ցուի ՏԻԳՐԻՍԷՆ ըսել թէ իրենց յանձնախումբը՝ հակառակ ժողովրդի կամաց՝ որչա՞մ է դրամը իր քով պահել: Նամակագիրն խիստ լեզու մը կը գործածէ յանձնախմբի՝ մանաւանդ Ասեանապետին դէմ, որ այս կամ այն միջոցաւ կը ջանայ եղեր այդ սակ Պօրտին յղել: Այս լուր վերապահութեամբ հրատարակելով՝ կը յուսանք որ Յաննախմբուրը կը ջանայ այս օրինակ դժգոհութեանց անդի շտալ բնաւ:

Արուսեակ կը գրէ Ռուսերէն. «Գերասանական խումբերն կը շատանան: Նոր խումբ մը կազմուած է մօտերս «Անեքէրիմ» ներկայացնելու՝ ի նպատակ Ձէյթունցի և որբերուն: Անկէ ետքն ալ Հայկազեան խումբը պիտի ներկայացնէ «Գոնակը»: Իսկ անոնցմէ վերջ Արարատեան անունով նոր կազմուած խումբ մը պիտի ներկայացնէ «Սե Հոգերը»: Ու այսպէս պարբերաբար պիտի ներկայացուին և ուրիշներ: Կ'ըսուի թէ այս վերջին յատկացուի մի մասն ալ պիտի յատկացուի Ձէյթունցի: Կեցցեն և քրիստոսաբանները:

Քաղաքիս յանձնախմբի տրամադրութեան ու հովանաւորութեան տակ քաղաքիս դերասանական խումբ մը քանի շարաթէն, «Մեծն Երսուս» պիտի ներկայացնէ ի նպատակ Ձէյթունցի:

Ռուսահայ մարդ օրփի (Գերմանիա) Հայ ուսանողներու մէջ ինչպէս Ձէյթունցի հանգանակութիւնն մը բացուած է երեք հանգանակիչներու Տիւարց Սմասիա Մարգարեանի, Գրիգոր Սրբազանի և վահան ձանդիկեանի ձեռամբ: Հանգանակութեան արդիւնքը ցարդ եղած է 110 մարդի շափ: Այս դրամ, կը գրէ մեզ Տ. Լ. Մանուկեան, թէ պիտի զրկուի խումբաբարութեանս՝ ընդհանուր գանձապետին յանձնելու համար: Եւ որպայի մէջ հանգանակուած ստակներն՝ հոս կը զրկուի ընդհանուր գանձապետին, մինչդեռ Խմբիկայի մէջ հանգանակութեան Պօրտին կը յանձնուին. այս ալ գուցէ ազգայնութիւն է...:

Ռուսահայ Ռայթ Հօլին մէջ օթեակ գնած էին Շարաթ երեկոյ Տիարք Թալաշանեան, Բէլէկեան, Եարաբեան, Տիւրքեան, Տիւրքեան, Գալեան, Տիւրքեան, Մամարեան և Թէրզեան:

ԱՆԱՀԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ
Ազգային, Գրական Գեղարուեստական
Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, Խմբագիր:
Ֆարսկան բաժանորդագիրն է \$2,00
երկու տարի միայն:

Հասցէն՝
A. Tchobanian, 6, Place de l'Odéon,
P A R I S, France.

Ստացած ենք Անահիտի երկրորդ թիւը: Փափաքողաց կը զրկենք՝ հասը 25 սէնթի: Բաժանորդագրուիլ ուղղորդուող կրնանք առաջին թիւն ալ զրկել:

Մ Ա Ն Բ Ա Ն Ի Ր Ք

Խորհրդի Գերմանացուց Որբանոցի պատասխաններէն հայ որբ մը հետեւեալը կը գրէ՝ Կոստանտնուպոլիս 1908 թ. 30 շաբաթաւոր ընթացքի մասին ասորի տարւոյն, որոցմէ մին ես եմ: Ամասիա լաւ է կ'ըսեն, ասոր համար երթալ ուզեցի, քան զի հոս որբերու վիճակը շատ խղճալի է, մանաւանդ հիմա որ ամեն կարգադրութիւն Գերմանացուց ձեռքէ: Անոնք որ բարեկամներէ և ծանօթներէ քիչ մը ստակ կրնան ճարել, անօթի մնացած ժամանակ շուկայէն հաց կը գնեն կուտեն, իսկ անոնք որ բոլորովին անաէր են, շատ անգամ անօթի կը մնան: Հանգերձի մասին բաւական աղէկ է: Հոս ուսանող կողակարութիւն կ'ընենք՝ օրը մէկ երկու դասեր առնելով, իսկ Ամասիա որ երթանք, կ'ըսուի թէ հողագործութիւն պիտի սորվինք: Ուրիշ մը կը գրէ՝ «Շատ բաներ ունիմ գրելու, բայց Հայրիկէն կը վախնամ (Հայրիկը որբանոցին Գերման Տեսուչն է): Պիտի ըսեմ թէ քիչ մը ստակ զրկէ, բայց չեմ համարձակիր: Մինակ այս ձեռք որբանոցը կը կենամ, ալ չեմ կրնար: Գրելիք շատ բաներ կան, բայց չեմ կրնար: Քիչ գրելովս կատ ըսն հասցիր»:

Մաշթոց վարդապետ Ուսթըրի Լուսաւորչական Հայոց թուահամարը սկսած է պատրաստել:

Գեղարքայի 3րդ կողմէն, Ուսթըրի մէջ Ազգային Լսարանի բացման առաջին ժողովը տեղի ունեցէր է ինքնակառուցութեան սակաւաթիւ ժողովուրդի: Օրուան ասենախօսք՝ Տըթ. Եսուսեֆ քանի մը սուր ակնարկութիւն ըրած է ժողովուրդի անտարբերութեան համար: «Ինձ կը թուի թէ, ըսած է Տըթ. Եսուսեֆ, այս անտարբերութիւնը մասնաւոր պատճառ մ'ունի. ժողովուրդը յարանէ դատ՝ եկեղեցի ալ չի գար»:

Ուսթըրի կը ըսենք թէ Սարգսեան Սրբազան պիտի աջակցի Ձեյթնի հանգանակութեան: Ուրախ ենք:

Յօլ Բիւլլերի Տէյլի Հէրալտին մէջ կը կարդանք թէ Մանուկ Եօրտեան անուն հայ մը անցեալները Ուսթըրի մէջ ձեռքարկուելով Յօլ Բիւլլեր բերուած է, ու տեղւոյն գաւառական դատարանին առջև դատուելով 9 ամիս բանտարկութեան դատապարտուած է՝ գողութիւն ըրած ըլլալուն համար: Այս դէպք պատահած է եղեր անցեալ տարի, Նոյ. 16ին, Հայ գողը՝ մասնաւոր բանալիով մը՝ «Յովհաննէս Մամարեան» անուն մէկի մը տունը կը մտնէ նոյն գիշերը ու պորտըրներէ՝ մէկին՝ Լազարբի (այս ալ հայ է) ժամացոյցը, շղթայն և ուրիշ հանգերձեղէններ գողնալով՝ հետեւեալ օրը դըրաւի կը դնէ գայնս պզտիկ գումարի մը փոխարէն ու Սէնթըրը Յօլս կը փախի, և ապա Ուսթըր կ'երթայ՝ թերևս արդարութեան ձեռքէն ազատելու յոյսով:

Պօսթոնի Մէլըրայններու ընկերութեան մէկ ժողովը տեղի ունեցած է Գեղարքայի 3րդ կողմէն օրն ի քիչ մը քիչ փոքր: Տնօրէն ժողովը ընտրութիւն կատարելէ զատ՝ որոշած է այլ և այլ աղբիւրներէ գանձած 100 տոլարին 50 ը Սարգսեանի Ազգ. Կեդրոնական վարժարանին զրկել ի Մէլըրէ. 25 ը Սուրբ Եղիշի ազգային որբանոցին, իսկ մնացեալ պահել գանձին մէջ:

Ուսթըրի կը գրէ մեզ մի բարեկամ. «Կը խօսուի թէ Սարգսեան Սրբազանի իրաւասութեան տակ համով հետով թերթ մը պիտի հրատարակուի»: Յաջողութիւն կը մտկոյնէք: — Չըլտիէն կը գրեն մեզ թէ Գեղարքայի 3րդ կողմէն Գերմանացուց Որբանոցի պատասխաններէն հայ որբ մը հետեւեալը կը գրէ՝ Կոստանտնուպոլիս 1908 թ. 30 շաբաթաւոր ընթացքի մասին ասորի տարւոյն, որոցմէ մին ես եմ: Ամասիա լաւ է կ'ըսեն, ասոր համար երթալ ուզեցի, քան զի հոս որբերու վիճակը շատ խղճալի է, մանաւանդ հիմա որ ամեն կարգադրութիւն Գերմանացուց ձեռքէ: Անոնք որ բարեկամներէ և ծանօթներէ քիչ մը ստակ կրնան ճարել, անօթի մնացած ժամանակ շուկայէն հաց կը գնեն կուտեն, իսկ անոնք որ բոլորովին անաէր են, շատ անգամ անօթի կը մնան: Հանգերձի մասին բաւական աղէկ է: Հոս ուսանող կողակարութիւն կ'ընենք՝ օրը մէկ երկու դասեր առնելով, իսկ Ամասիա որ երթանք, կ'ըսուի թէ հողագործութիւն պիտի սորվինք: Ուրիշ մը կը գրէ՝ «Շատ բաներ ունիմ գրելու, բայց Հայրիկէն կը վախնամ (Հայրիկը որբանոցին Գերման Տեսուչն է): Պիտի ըսեմ թէ քիչ մը ստակ զրկէ, բայց չեմ համարձակիր: Մինակ այս ձեռք որբանոցը կը կենամ, ալ չեմ կրնար: Գրելիք շատ բաներ կան, բայց չեմ կրնար: Քիչ գրելովս կատ ըսն հասցիր»:

13ին Նշան Սանտուրճեան անուն Մէլըրէյի երիտասարդը, շողեկառաց գրծին վրայէն քայած ժամանակ, Մէլըրի սրարչու կառախումբը ետեւէն կը հասնի յանկարծ, և զարնուելով խեղճ տղուն՝ անոր ոտքերն ու թեւերը կը կտորէ. ոստիկանութիւնն անմիջապէս հիւանդանոց կը փոխադրէ գայն, ուր նա կ'ապրի տակաւին մահամերձ վիճակի մէջ:

Մեր Ուսթըրի թղթակիցը կը գրէ մեզ թէ անցեալներն Գեղարքայի Մարտիրոս Գազանճեան անուն մէկը 635 տոլար և երկու գաղթական ոսկի գրպանը դրած Հանովըր փողոցի Հայ սփորիչներուն խանութը կ'երթայ, ու դարմանքը գրպանէն հանելով հոն գտնուողներուն կը ցուցնէ պարծանք: Ներկաներէն մին՝ Պետրոս Պուշաքճեան կամ Փիթըր Ճաքսըն, նմանապէս Գեղարքայի, կը թուի թէ կ'որոշէ հոն՝ այդ դարմանքն ձեռք ձգել կերպով մը. ուստի կը բարեկամանայ Մարտիրոսի հետ: Վերջերս աներես գողը լսելով թէ Մարտիրոս իր ըստակներն ստուգելու մէջ պահած է, ընկերոջ մը հետ անոր տունը կ'երթայ ու սնտուկը կ'որոշելով՝ ստակները կը գողնայ. հետեւեալ օրը Պետրոս գողօնն առնելով ֆոթաքէթ կ'երթայ իր տարփածունի հետ, ու \$50է տոլարէ գատ մնացած ստակը տեղւոյն դարմանքը կը դնէ ի պահ:

Խեղճ Մարտիրոսը հոգէն կը հիւանդանայ, ու վերջերս յոյսը կտրած՝ Փրօվիտէն կ'երթայ գործի համար, ուր կը հանդիպի իր կեցի՞ք բարեկամ Պուշաքճեանի և ուրիշ մը Մովսէս Գազանճեան անուն: Գողին տարփածուն ֆոթաքէթի մէջ կ'սկսի զեղխութեամբ ապրել: Ոստիկանութիւնն կ'սկսած լսել կը հսկէ անոր վրայ, և վերջապէս անցեալ օր կը ձերբակալէ գայն. սա կը խոստովանի ամեն բան. ուստի ֆոթաքէթի ոստիկանութիւնն ինքիւրը կը հեռագրէ Փրօվիտէնի ոստիկանութեան. Գազանճեան կը կանչուի ոստիկանապետ տեսնելու երթալ: Իր երկու բարեկամներն, որք բուն գողերն էին առանց զիտնալու հեռագրին բնութիւնը՝ Գազանճեանի կ'ընկերանան, և հոն կը ձերբակալուին՝ առանց աւելի դժուարութիւն տալու ոստիկանութեան: Պուշաքճեան խոստովանած է իր յանցանքը, որոյ պատիժը պիտի տրուի դատին օրը, որ տեղի պիտի ունենայ գալ շաբթուս:

Տիկին Եղնար Պաղտատարեան, որ վերջերս իր մտնունէն բաժնուած ուրիշի մը հետ կ'ապրի եղեր Ուսթըրի մէջ, տեղւոյն կանանց Օթանդակ ընկերութեան վերջի սովորական ժողովին մէջ պարսաւանաց զուէ ստացած ու արտաքսուած է ընկերութեանէն, որոյ հաշուակալն է եղեր բաւական աստիճանով:

ԴԻՍ ՈՒ ԴԻՆ

Պօսթոն Դեկտ. 12. Երէկ Եպիսկոպոսն Լին պատարագած է, և իր բանադրանաց առաջին «նշով» կարգացած է... Պօսթոնցիներուն: Կը լսեմ թէ խրատած է Լինցիներն որ Պօսթոնցիներուն հետ յարաբերութիւններն լազն, «վասն զի անոնք անհաւատ են» — Եպիսկոպոսին դրամ չը տալնուն համար: Այս ամենուն արդիւնքն եղած է որ Լինցիք ալ Ուսթըրի եկեղեցւոյ պարտուց համար լուի տասն և չորս տոլար տընուած են: Անտարակոյս եպիսկոպոսն կը պատրաստուի Լորէնսի մէջ ալ Լինցիներն նշովել: Է՛, ի՛նչ հող. ժամանակին Աշգեան եպիսկոպոսն ալ նըրզովեց, և փոխարէն կանաչ հագուստ ստացաւ: * * * Հոս Ուսուսական ակումբ մը կազմուելու վրայ է. ակումբի նպատակն է դաստիարակել տեղւոյն ե-

րիտասարդութիւնը, և շարաթափը՝ ճարներէ գոյանալիք գումարովն ալ Հայրենեաց մէջ կրթական գործին օգնել: Ակումբը մտադիր է նաև ձեռք ձգել Պօսթոնի և շրջակայից բոլոր հայոց հասցէները և հաղորդակցութեան միջոց դառնալ զանազան գաղթականութեանց մէջ:

Պօսթոնի լսարանն ալ տեսակ մը ակումբի վերածել կը խորհուրի: Որոշուած է ժողովարարի վարձքի նեղութիւն չը կրելու համար անգամակցական բաժնեգրութիւն հաստատել. իսկ ժողովն բաց թողուլ անհամոզ և ոչ անգամոց առջև հաւատարմութիւն:

Երէկ լսարանի ժողովին մէջ խօսած են Պրն. Ա. Լուլէճեան և Տըթ. Ա. Աւետիսեան: ԱՊՏԱԿ

ՉՍԻՆՏՏ ՄԸՆ ԱԼ

Երէկ Երբօւմի մէջ կարդացի որ «Ճէրիտէյի Երբօւմի» լրագրի խմբագրութիւնը Սուրհանդակ անունով հանդէս մըն ալ հրատարակած է, բայց թուրք շրջանակներու մէջ Սուրհանդակը թարգմանուած է Սուրհանդակ. եւ քանի որ այդ երկրին մէջ հայերը սուր կ'ախելու իրաւունքէն զրկուած են, և պէտք է զրկուած մնան յաւիտեան՝ ըստ թրքաց, ուստի խափանած են գայն, արտօնելով անոր տեղ «Բանբեր» մը հրատարակել:

Չարմանալի բան, թուրքերը այդքան ապուշ են. չե՞ն վախնար որ օր մը յանկարծ Ա-ի տեղ Ո տառը կը սպրտի և կամ այբին մէկ ծայրը տըլուած ժամանակ պակաս կը մնայ, ու բանբերը բոնբեր, և օր մ'ալ բոմբեր կ'ըլլայ... ՎՍՐԴԳԵՄ

ՊՏԱՍՍԱՆՆԵՐ

Ս. Հ. Ճիւղբերկ — Ե. ի բաժնեգրինը լրացած էր 55 թուով: Ձեր քարաւ առած ենք:

Մ. Ն. Յ. Լօվէլ — Տի. Գրի. Սի կորսուած ծրարը ձեր փոթէն փնտնելու էք. մենք դրկած ենք գայն ժամանակին:

Օ. Ս. Հըտտըն — Ձեր բաժնեգրինն լինցած է 52րդ թուով:

Մ. Գ. Պ. Պօսթըն — Ձեր դրկածը տեղւոյ անցկութեան համար շնքը կարող հրատարակել. ներողամիտ եղիք:

Վարդգէս — Փրօվիտէն, Ենորհակալ ենք: Կը հրատարակուի ի կարգին:

Պ. Մ. Միտըլպօր — Ձեր բաժնեգրինն կը լրանայ 52րդ թուով:

Պ. Կ. Բէքթաշ — Ձեր բաժնեգրինն լրացած է 52րդ թուով:

Յ. Ն. Յօլ Բիւլլեր — Ենորհակալ կըլլանք եթէ գրէք:

ԱՋԴԱՐԱՐ ՈՒԹԻՒՆ

Նիւ Եորքի Հ. Ե. Թանգարանի Միութիւն

Թանգարանը աւելի ճոխացնելու և ժողովրդեան աւելի օգտակարութիւն բերող միջոցներուն վրայ խորհրդակցութիւն ընելու նպատակաւ, ինամակալութիւնն որոշած է յառաջիկայ Երբօւմի (Դեկտ. 24) երեկոյն մի հրատարակչից ժողով ընել, ի-Չիմընի Գորնըր հօլ, թիւ 57 Վէսթ 25րդ փողոց (*) ժամը ճիշդ 7½ին, ուր կը հրաւիրուին ամեն հայ անհատ, անգամ և ոչ անգամ:

Պիտի ասենախօսեն Արթ. Սաք Վարդապետ և Տ. Գ. Չիթճեան, այս վերջնոյն նիւթն է՝ «Յառաջդիմութիւն»:

Ի Դիմաց ինամակալութեան 98 Դեկտ. 19. (*) Ազատ Լսարանի սովորական սրահին մէջ:

ԱՐՄԻՆԻԸՆ ՓՕԷՄՍ (Հայկական Բանաստեղծութիւններ) Անգլիերէնի տաղաչափեց Ա. Լ. Ս. ԸՍԹՈՆ Պ. Ա. Ք. ՈՒԷ. Լ. Գիլնէ է \$1.25 Փօսթի ծախսով միասին. Դիմել առ Miss Alice Stone Blackwell, 3 Park St, BOSTON, MASS.

ՀԱՅ ՅԱՃԱՍՈՐԴՆԵՐՈՒՍ

Կը ծանուցանեմ թէ ի դիւրութեամբ զեղարանին նախկին տեսուչը Պ. Ստեփանեան ամէն երեկոյ ժամը 6էն մինչև 8 պիտի ծառայէ իր հայրենակիցներուն: Պատիւ ունիմ ըսել թէ ասկէ վերջ «Ուրիշ» հէր վիւրը անուն հրաշալի մազի դեղը պիտի ծախենք շիշը 50 սէնթի: Հմուտ բժիշկներ կը վկայեն թէ իր տեսակին մէջ լաւագոյնն է մազերը զօրացնելու, բուժելու և նախնական գոյնը պահպանելու համար:

Տակաւ մը զուտ Նորվեգիկան ձուկի իւր բերել տուած եմ, որոյ լիւրան 45 սէնթի պիտի ծախենք: Ինչպէս ինքն կը պատրաստուին աժան և թարմ դեղերէ: Փորձեցէք: ՈՒՆՏՍՐԸ ՏՐԸԿ ԸՍԹՕՐ, Մաքս Հանսպըրկ 472 3րդ ամբիւ, Նիւ Եորք:

TURKISH GEMS,

Նասրէտտին Հօճային մէսէնթերուն Անգլիերէն կոկիկ թարգմանութիւնը՝ հանդերձ Հօճային պատկերով, մաքուր տպագրութեամբ գրքոյի մը վերածած եմ, որն էր Ամերիկացի և այլ բարեկամացնուէր տալու շատ յարմար է: Գիլնէ 25 սէնթ է, զրկելու ծախսը վրաս: Դիմել — Պատ. Ս. Վ. Պէտիկեան, Rev. S. V. BEDICKIAN, 275 Ridge Ave, ALLEGHENY, PA.

ԵԱՂՈՒՊ ԻԼՊԷԿԵԱՆ ԵՒ ՅԱԿՈՒՑ ՏՈՍՈՒՄԵԱՆ

38 Լիւրթի ֆողոց, Ուսթըր, Մասս. Կը ծանուցանեն արգոյ ազգայնոց թէ խիստ լաւ տաճկական ապրանքներ ունին. ինչպէս խալի, թէյպլը և փիտոյ զվըրներ, մէնթին, կիւլեաղի, թաշկինակ, սիկարի թուղթ և ուրիշ ընտիր կարգի շատ տեսակ թրքական ապրանքներ, որոնք ընծա արուելու յարմարագոյն իրենն են. այս ամենքը կուզեն ամենաթան գը ներով ծախել լինցնել. եթէ ուրիշ քաղաքաց ազգայինք փոթըլ քարթով մը գիմեն, փոթով պատասխան և գոհացում պիտի ստանան: Կուզեն նաև շափաւոր գնով մը ծախել Փրոսկոթ փողոցի թրքական բաղնիքը:

ԿՈՒՋՈՒԻ

Կետարացի Սմբատ Սուրի անուն անձի մը հասցէն բարեկամի մը կողմանէ. գիտցողներն հանին գրել Լըրագոյս խմբագրութեան:

AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212 ՄԵՄԱՔԱՆԱԿ (Հօլսէյլ) ՎԱՃԱՍԱԿԱՆՔ Արևելեան և Տաճկական Ապրանքաց Այս վաճառատունն իր տեսակին մէջ ամենամեծն է ի Նիւ Եորք: Հոն կը վաճառուին ամեն տեսակ անգլանագործներ, սեղանի, մէնթըլի, փիտոյի ևն. մետաքսեայ և ոսկեթել ծածկոցներ, Դամասկոսի վարագոյրներ, Բերիայի աղապանի, քէֆիա, ևն. ևն.: Հայ վաճառականք կը հրաւիրուին փորձել միասնաբար: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փութով և խնամօք կը կատարուին: Գրներն շափաւոր և ապրանքներն լաւագոյն լինելով, ուրիշ ո' և է տուն չէ կարող մրցիլ այս տան հետ:

Բ. ՊԱՍՏԱՍԻԱՆ ԿԵՂԻՐ ԿՕՄԻՏԵՆ

(Շարունակութիւն և վերջ)

Կ'ըսէք թէ «Արփիարի խնդրին մէջ Դաշնակցութիւնը իր փաստերը փողոցէն հաւաքած չէ»: Չէ', չէ', մենք ձեր փաստերուն այդ պատիւն չենք տար: Եթէ զանոնք դուք փողոցէն աւելի վարնոց տեղերէ հանած չըլլայիք երևան կը բերէինք, գէթ ձեր կուսակցութեան ճակտին խարակուած գրպարտչի արտաք սրբելու համար: Կ'ըսէք նաև թէ «այդ փաստերը երևան հանելու համար Նոր Հնչակեանք պարտին պատույ առեալը ինքնբռնուտ սկսիլ»: Աղէկ. ըսել է աչք կապուկ կը խաղանք: Ամեն պարագայի տակ դուք որոշած էք թագուհի, և մենք ալ պարտաւոր պէտք է ըլլանք զանոնք գտնելու: Ենթահակալ ենք. այդ աչք կապուկը երկու տարիէն աւելի եղաւ որ մեզ հետ կը խաղաք: Մենք շատ դարձանք ձեր փաստ կոչածին շուրջը, ի ներքուստ ալ, արտաքուստ ալ, վարագոյրին ճոթերը ամենուստ դարձուցինք և կուգանք խոնարհարար խոստովանիլ թէ բան մ'ալ չ'գտանք: Մեր մէջ մէկ անձ իսկ գտնուած չէ որ Արփիարին «մասնիչ» ըսած ըլլայ: Ճանկիւլեանը, որ Արփիարի ամենաօրինակիմ հակառակորդը հանդիսացաւ, այն իսկ իր «Գիմակաւորներուն» մէջ Արփիարին մասնիչ չը կրցաւ ըսել. և ընդհակառակը խոստովանեցաւ թէ Դրօշակի խմբագրութեան կողմանէ իրեն ներկայացուած ասկումանները նշանակութենէ զուրկ բաներ էին: Մեր երկրորդ ընդհանուր պատգամաւորական ժողովը դեռ նոր աւարտեցաւ: Մենք որքան քննեք ենք, այնքան Արփիարի ամբողջութիւնը փայլեր է: Այդ խօսքը ձերն է. բան մը զիտէք նէ հրատարակել եկէք և պաշտօնագրայն ըսելու քաջութիւնն ունեցէք:

Արփիարի խնդրոյն մէջ դուք Ձեր կուսակցութեան այն գիրքը կու տաք, ինչ գիրք որ Տրէյֆուզի խնդրոյն մէջ Գերմանիա ունի: Գերմանիա երբէք ամբաստանած չէ Տրէյֆուզը: Տրէյֆուզ ամբաստանուած է իր Գաղիոյ բանակին գաղտնիքները Գերմանիոյ վաճառող դուստան մը, ինչպէս որ Արփիարը կամբաստանէք թիւրքին վերաբերմամբ: Ձեր այդ խօսքով Դաշնակցական կուսակցութիւն թիւրք կատարութեան տեղը կը դնէք: Ամենուստ յայտնի է ձեր կուսակցութեան փաստագրած փախուստը Արփիարի անմեղութեան երեսէն. ոտակայն մենք երբէք չը պիտի կամենայինք Ձեզի, որ իբր թագստոցի ամենավերջին ապաստան՝ այնքան հեռուն իր թիւրք մինչև թիւրք կուսակցութեան ուսերուն ետեւ կը ծկուէիք: Եթէ շատ կը ցանկաք Գերմանիոյ գիրքը առնելու, Գերմանիոյ պէս ալ, ազնիւօրէն ըսելու էք՝ «Ամբաստանեալը անպարտ է»: Իսկ եթէ կը պնդէք ձեր վերի ձախող յայտարարութեան վրայ, միանգամայն ամբաստանող հանդիսանալով, մենք ալ ձեզի կ'ըսենք. «Երթաք բարով»:

Ինչպէս Տրէյֆուզը ամբաստանողը Գաղիոյ բանակը եղած է, անանկ ալ Արփիարը ամբաստանողը Դաշնակցական կուսակցութիւնն է: Գաղիոյ խնդրը Տրէյֆուզի դատին վերաբնութիւնը պահանջեց և բանակը տեղի տուաւ. զրպարտչներէն զընդապետ Հէնրի խղճահարութեանն անձնասպան եղաւ. հաղարակեալ էութեան յիշուի երեսը առեր Ամերիկայ կը փախչի, և միացեալները ահաբեկած են: Ահա Գաղիոյ բանակը Գաղիոյ խղճին առջև ինքզինքը սրբելու շըրջանին մէջ տաած է: Նոյնն է որ կը ցանկանք Դաշնակցական կուսակցու-

MARK C. MEAGHER,


108 Fulton St. New York City.

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ՄԵԾԱԳՈՅՆ ՆԻՒ ԵՈՐԳԻ ՄԵՂ

\$1.00

Շարժական արվարձանով տունի տեղ ի Մուրէյ Հիլ Փարք, որ Մեծագոյն Նիւ Եորքի աշխարհագրական կեդրոնն է ՅԼԸՀԻՆԿԻ կից: Սա տեղը ծովի մակերևոյթէն 120 ոտք բարձրութիւն ունի, ուր Յարգ փողոցի Քէրրիէն Հինգ սէնթով կերթցուի 19 բուլէյն:

Այս Հողերը տեսնել փափաքողներուն երթեալներուն համար ձրի տոմս կը տրուի: Երթալ ուղղուելու ամեն Հինգշաբթի և Կիրակի օրեր, կէս օրէ վերջ ժամը մէկ ու կէսին, ներկայ գտնուելու են Հոնկ Ասյըրի ֆէրրիին առջև, Իսթ 34րդ փողոց, ուր պիտի կրնան տոմս ստանալ \$ Ս. Եարարմանէ, որոյ հասցէն է 298 Ուէսթ 12րդ փողոց:




Բնակութեան համար վայր մընէ Փարք, որուն գեղեցիկ արարարութեամբ կից է մի անգամ այս վայր: Կան սարակաց ու անբողոցներ, եկեղեցի:

Մար խիտ յար Մուրէյ Հիլ զեցիկ տեսարանը հրապուրէ զձեզ հաճիք այցելել Հիմայ Հոնկ հատական դըպնետի և այլն:

Թեան համար: Արփիարի մասին որ և է դատարարութիւն ու դատաւարարութիւն դեռ տեղի ունեցած չէ: Ձեր «տակումն» կողածները իսկ ձանկիւլեանը տեսած և հաստատած է թէ արժէք չուներ: Արդ Հայ ժողովրդեան խղճը կը պահանջէ Դաշնակցական կուսակցութեանն թէ, եթէ դեռ արեւ չտեսնած օրինական փաստեր ունի, զանոնք երևան բերէ և անոնցով Արփիարը մեր անողոք դատաստանին յանձնէ, և կամ եթէ փաստ չուներ, ինչպէս որ յայտնի է, իր մէջ զբաւնուող զրպարտիչ, շարամիտ և եղբայրասպան անձերը գտնէ, դատէ ու դատաւարտէ. և այսպէսով սրբէ ինքզինքը, ու արժանի դատույ մեր յարգանաց ու սիրով իբր ազնիւ քոյր յեղափոխական կուսակցութիւն մը: Դեկ. 7, Նիւ Եորք: Գ. Պ. ՉԻԹՃԵԱՆ

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ Ամսագիր Գրական, Բանասիրական, Կրթական և Գիտական. Կը հրատարակուի Վենետիկի Միսթարեան Միտարանութեան կողմէն: Բացուած է բաժանորդագրութիւն 1899 թուականի համար: Ամերիկայի համար տարեկան բաժանորդագրին է 2 տուրք կանխիկ: Հասցէն է՝ Redaction de la revue BAZMAVEP, St. Lazare VENISE, Italie.

ՊՈՒԼՂՈՒՐԻ ՄԻՈՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹ. BULGUR MANUFACTURING CO. 151 Union St, WORCESTER, MASS. Կը ծանուցանեն թէ երկարատե փորձառութեան շնորհիւ իրենց շինած պուլղուրը մեծ ընդունելութիւն կը տած է ամէն տեղ: Առանց քարի և անախորժ հոտի Պուլղուրը ամէն հայ տունէ կը փնտռուի: Մենք, որ միակ Պուլղուրի գործարանն ունինք այս քաղաքի մէջ, մեր բոլոր ժամանակը տուած ենք անոր յաջողութեան համար: Մեր յաճախողքը եթէ զոհ չի լինին մեր ապրանքներէն զրամբին ետ կը տրուի, թէ և ցայսօր ոչ մի հայ տոհմոց թիւն յայտնած է: Մեզ համար կը վկայեն հայ աիկիները: Պուլղուրի լիարան կարճէ 3 1/2 սէնթ խանութներու և ճաշարաններու համար. իսկ տուններու համար 4 սէնթ: Յանձնարարութիւն ճշդիւ կը կատարուին: Փոխադրութեան ծախքը զընդուն վրայ է:



Ա. ԹՕՓՈՒՋԵԱՆ. ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ, Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք Այս խանութին մէջ կը վաճառուին ամէն տեսակ կօշիկներ խիստ աժան գներով: Մեր հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք: Նոր ապսուրուած կօշիկներ կը կարենք ձեռնար եւ վայելուչ կերպով: Կը նորոգենք հին կօշիկներ շափաւոր գներով: Ուրիշի մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. եւ վստահ եղիք որ շատ գոհ պիտի մնաք: 239 Իսթ 26րդ փողոց Արանց կօշիկներ \$1.25է մինչև \$5.00 Կանանց \$1.25է « \$2.50 Տղայոց և աղջկանց կօշիկներ \$0.50է « \$1.50

Հ Ի Ր Չ Օ Լ Ա ՄԱՁԻ ԴԵՂ HIRSOLO. Կը զօրացնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դարձնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը: Միանգամ փորձել բուսական է սա դեղին արժէքը զխանայու համար, որ արեւելեան իտտեղէ պատրաստուած է յոյժ հաճելի միջոցով: Կը ծախուի Եւրոպայի գեղարդներուն քով: Հին 50 Սէնթ միայն: Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ րեկերութիւնէն: Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարականի քով, Թիւ 45 Էքսչէնճ Ըսթրիթ, Ուսթըր, Մասս:

ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ Նկատելով որ ամեն կողմերէ շատ մը բանաստեղծութիւններ կը շրկուին մեզ, և նկատելով որ ՏԻԳՐԻՍԻ մէջ տեղույ անձկութեան պատճառաւ չենք կարող գտնուի մեծաւ մասամբ՝ առանձին հատորի մը մէջ ամփոփել, պայմանաւ որ ամէն փափաքող անձ իր ոտանաւորին համար հարկ եղած շարելու, էլէքթրօթայի շինելու և տպագրելու ծախքերի վճարել յանձն առնէ կանխաւ:

Հեղինակներն իրենց իւրաքանչիւր ոտանաւորին համար մէկ կամ երկու օրինակ պիտի ստանան հրատարակուած հատորէն՝ երբ լոյս տեսնէ: Այս հատորը պիտի անուանուի «Ժողովրդական քննութիւն»: Մտնարամանութեանց համար զըրեւ լրագրոյս խմբագրութեան:

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ Այս տպարանի մէջ կը տպագրուին թէ՛ Հայերէն և թէ՛ Անգլիերէն լեզուաւ ամեն տեսակ այցետոմս, ամսականներ, հրատարակչի, շըրջաբերականներ, տետրակներ ևն: Մեր գները գոհացուցիչ են. տը պուրութիւնն՝ մաքուր: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք կը կատարուին փուլով ու խնամով:

ՊԱՏԱՍԱՐ ԹԱՇՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ. B. TASHJIAN & Co., 63 MAIN ST., BANGS COURT, WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն արգոյ հասարակութեան թէ իրենց փայտի գործը յաջողեցնել վերջ հաստատած նայթմ պուլղուրի և ծեծածի գործարան մը վերոյիջեալ անուան սակ: Այս գործարանի մէջ պատրաստուած ապրանքներն ոչ միայն դիւրամատչելի գներով կը վաճառուին, այլ և մաքրութեան ու տեսիկի կողմէ անհամեմատ ընտիր են ուրիշներէ: Պանութպաններու համար խոշոր կամ մանր պուլղուրի փառուստը կարճէ 3 սէնթ, իսկ տուններու համար 3 1/2 սէնթ: Տուներու և ճաշարաններու համար զիւրութիւն տալու նպատակաւ որոշուած է մինչև 25 փոտուս քանակութեամբ ապրանք վաճառել: Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք փութով և ճշդիւ կը կատարուին: Փորձեցէ՛ք անգամ մը և գոհ պիտի մնաք:

ՅԱԿՈՒԲ ԲԱՐԱԿԵԱՆ Ամերիկեան և Արեւելեան ընդհանուր Նպարավաճառ-Կրօսքրիս, Թիւ 45 Էքսչէնճ փողոց, Ուսթըր: